Հավելված N 1
ՀՀ կառավարության 2023 թվականի
հոկտեմբերի 12-ի N 1762 - Լ որոշման

Կ Ա Ր Գ

2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-ԻՑ ՀԵՏՈ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ, ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ԿԱՄ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում է 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված Լեռնային Ղարաբաղում նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացրած ուսումնական հաստատությունների առկա և հեռակա ուսուցման համակարգի ուսանողների և Հայաստանի Հանրապետությունում գործող նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական, բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում կամ կազմակերպություններում (այսուհետ՝ ՈՒՀ) առկա կամ հեռակա ուսուցմամբ վճարովի համակարգ հրամանագրված ուսանողներին (այսուհետ՝ ուսանող) ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրման գործընթացը:

2. Կրթաթոշակի տարեկան չափը որոշվում է՝ հիմք ընդունելով ՈՒՀ-ի համապատասխան մասնագիտության (կրթական ծրագրերի) համար սահմանված վարձի չափը, սակայն չի կարող գերազանցել համապատասխան մասնագիտության (կրթական ծրագրերի) համար NN 2 և 3 հավելվածներով սահմանված առավելագույն չափը, իսկ մագիստրոսի կրթական ծրագրերում՝ 560 հազ. դրամը:

3. Սույն կարգով կրթաթոշակները տրամադրվում են միայն 2023-2024 ուստարվա համար:

2. ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

4. Ուսանողները սույն կարգի շրջանակներում փոխհատուցում ստանալու համար դիմում են ՈՒՀ-ին:

5. ՈՒՀ-ն կազմում և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն) է տրամադրում սույն միջոցառման շահառուների անվանացանկը՝ համաձայն նախարարության հաստատած ձևաթղթի՝ նշելով շահառուների տվյալները՝

1) ուսանողի նույնականացման տվյալներ.

2) տեղեկատվություն՝ տեղափոխված կրթական ծրագրի, մասնագիտության և որակավորման մասին.

3) տեղեկատվություն՝ մինչև տեղափոխությունն ուսումնառած կրթական ծրագրի, մասնագիտության և որակավորման մասին.

4) կրթական աստիճանը.

5) կուրսը.

6) ուսուցման ձևը.

7) այլ տեղեկատվություն (ըստ անհրաժեշտության):

6. Անվանացանկերը նախարարության կողմից ստուգվում են և համադրվում Միասնական սոցիալական ծառայության գրանցամատյանների հետ և Լեռնային Ղարաբաղի համապատասխան ՈՒՀ-ից ստացված տվյալների հետ՝ ըստ անհրաժեշտության ճշգրտելով կամ լրացնելով:

7. Ուսանողներին հատկացման ենթակա ֆինանսական միջոցները ՈՒՀ-երին տրամադրվում են նվիրաբերության պայմանագրերի (լրացումների դեպքում՝ համաձայնագրերի) հիման վրա՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր ՈՒՀ-ի կողմից նախարարություն ներկայացված և սույն կարգի 6-րդ կետով ճշգրտված ու լրացված անվանացանկերը:

8. ՈՒՀ-ի և ուսանողի միջև կնքվում է պայմանագիր՝ հատկացված կրթաթոշակի միջոցներով ուսման վարձի փոխհատուցման մասին:

9. Ուսումնառությունն ընդհատած (պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու, առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու, հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու դեպքերում) ուսանողը սահմանված կարգով և ժամկետներում վերականգնվելիս պահպանում է սույն կարգով ունեցած կրթաթոշակ ստանալու իրավունքը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

13.10.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ